United Nations Economic Commission for Europe

MINISTRY FOR FOREIGN AFFAIRS OF FINLAND

# <<Ջուր և առողջություն>> արձանագրություն: Հայաստանում առողջության բարելավում նպատակային ցուցանիշների սահմանման միջոցով՝ ջրի կայուն կառավարում, անվտանգ խմելու ջրի մատչելիություն և պատշաճ ջրահեռացում ապահովելու նպատակով

## ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՔԱՐՏԵԶ

Հայաստանի կողմից ՄԱԿ-ի ԵՏՀ - ԱՀԿ եվրոպական տարածաշրջանային գրասենյակի «Ջուր և առողջություն»արձանագրության վավերացման

*Մայիս, 2014թ.*

Սույն զեկույցը պատրաստվել է Հայաստանի Հանրապետությունում ջրի և առողջության մասին արձանագրության իրականացման վերաբերյալ ծրագրի շրջանակում, որը ֆինանսավորել է Ֆինլանդիայի կառավարությունն իր FinWaterWei ծրագրի միջոցով: ՄԱԿ-ի եվրոպական տնտեսական հանձնաժողովը (ՄԱԿ ԵՏՀ), որպես հիմնական իրականացնող կազմակերպություն, օժանդակել է Հայաստանի Հանրապետությանը ծրագրի իրականացման գործում: <<Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի>> ՀԿ –ն համաձայնեցրել է ՀԿ-ների օժանդակությունը և ցուցաբերել կազմակերպչական աջակցություն:

Սույն հրապարակումը պատրաստել է Վահագն Տոնոյանը (Հայաստանի ջրային ռեսուրսների կառավարման փորձագետ), որը հանդես է գալիս որպես առաջատար հեղինակ՝ հիմնվելով ազգային աշխատանքային խմբի պատրաստած և ծրագրի Ղեկավար հանձնախմբի կողմից հաստատված տեխնիկական հաշվետվությունների վրա և ստանալով հետյալ անձանց օժանդակությունը՝

Ալիշեր Մամաջանով (ՄԱԿ-ի ԵՏՀ, <<Ջուր և առողջություն>> արձանագրության քարտուղարություն)
Մեթյու Կահեյն (ՄԱԿ-ի ԵՏՀ առաջատար խորհրդատու)
Վոլոդյա Նարիմանյան (բնապահպանության նախարարություն, Հայաստան), ծրագրի համակարգող
Նունե Բակունց (առողջապահության նախարարություն, Հայաստան), ծրագրի համակարգող

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ ..... 4

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ..... 5

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆՆ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ..... 6

*3.1 ԱՄՓՈՓՈՒՄ* ..... 9

*3.2. ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏ* ..... 10

*3.3. ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԴԱՇՏ* ..... 18

4. ՎԱՎԵՐԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՎԵՐԱՆԱՅՈՒՄ ..... 23

5. ՄԱԿ-Ի ԵՏՀ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԻ ՎԵՐՋԻՆ ՎԱՎԵՐԱՑՈՒՄՆԵՐԸ ..... 25

6. ՎԱՎԵՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՀԱՆՋՎՈՂ ՔԱՅԼԵՐԸ ..... 26

7. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ..... 27

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ..... 29

## Հապավումների ցանկ

| | |
|---|---|
| ԱԵԿԿԱ | Արևելյան Եվրոպա, Կովկաս, Կենտրոնական Ասիա |
| ԱԻՆ | Արատակարգ իրավիճակների նախարարություն |
| ԱՆ | Առողջապահության նախարարություն |
| ԱՊՏ | Առողջապահական պետական տեսչություն |
| ԱՔԵ | Ազգային քաղաքականության երկխոսություն |
| ԲՆ | Բնապահպանության նախարարություն |
| ԲՊՏ | Բնապահպանական պետական տեսչություն |
| ԳՆ | Գյուղատնտեսության նախարարություն |
| ԵՄ | Եվրոպական միություն |
| ԵՋ | Երևանի ջրմուղկոյուղի ընկերություն |
| ԷԲՌՆ | Էներգետիկայի և բնական ռեսուրսների նախարարություն |
| ԼՋԿ | Լոռի - ջրմուղկոյուղի |
| ՀԾԿՀ | Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով |
| ՀԿ | Հասարակական կազմակերպություն |
| ՀՀՄՊԾ | Հայաստանի հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի պետական ծառայություն |
| ՀՄԿ | Հիդրոերկրաբանական մոնիթորինգի կենտրոն |
| ՀՋԿ | Հայջրմուղկոյուղի |
| ՀՎԿԱԿ | Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն |
| ՀՓԾ | Հայաստանի փրկարարական ծառայություն |
| ՄԱԿ ԵՏՀ | Միավորված ազգերի կազմակերպության Եվրոպայի տնտեսական հանձնաժողով |
| ՆԱՋԿ | Նոր Ակունք - ջրմուղկոյուղի |
| ՇՄՆՄԿ | Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիթորինգի կենտրոն |
| ՊՈԱԿ | Պետական ոչ առևտրային կազմակերպություն |
| ՋԱԽ | Ջրի ազգային խորհուրդ |
| ՋՇԴ | Ջրի շրջանակային դիրեկտիվ |
| ՋՌԿԳ | Ջրային ռեսուրսների կառավարման գործակալություն |
| ՋՌՀԿ | Ջրային ռեսուրսների համապարփակ կառավարում |
| ՋՔԲ | Ջրերի քաղաքականության բաժին |
| ՋՏԿԲ | Ջրավազանային տարածքային կառավարման բաժին |
| ՋՏՊԿ | Ջրային տնտեսության պետական կոմիտե |
| ՋՕԸ | Ջրօգտագործողների ընկերություններ |
| ՎԷՎ | Վերականգնվող էներգիայի վարչություն |
| ՎԼՀ | Վեճերը լուծող հանձնաժողով |
| ՏԿՆ | Տարածքային կառավարման նախարարություն |
| ՓԲԸ | Փակ բաժնետիրական ընկերություն |
| ՖՆ | Ֆինանսների նախարարություն |

## 1. Ներածություն

Հայաստանի Հանրապետությունը 1992թ. ընդունված ՄԱԿ-ի ԵՏՀ <<Անդրսահմանային ջրային հոսքերի և միջազգային լճերի պաշտպանության և օգտագործման մասին կոնվենցիային>> (Ջրային կոնվենցիա) կից <<Ջուր և առողջություն>> արձանագրությունը ստորագրել է 1999թ. հունիսի 17-ին, Լոնդոնում: Այդ ժամանակվանից սկսվել է արձանագրության վավերացման գործընթացը:

Արձանագրության 6-րդ հոդվածի պահանջների համաձայն նպատակային ցուցանիշների և դրանց կատարման ժամկետների սահմանման գործընթացը դյուրացնելու և Հայաստանում արձանագրության իրականացմանն օժանդակելու նպատակով, ՄԱԿ-ի ԵՏՀ-ն նախաձեռնել է աջակցության ծրագիր՝ սերտորեն համագործակցելով ՀՀ բնապահպանության և առողջապահության նախարարությունների հետ և ստանալով Ֆինլանդիայի ֆինանսական աջակցությունը FinWaterWEI[1] ծրագրի միջոցով:

Ծրագրի հիմնական նպատակներից մեկը Հայաստանի Հանրապետության կողմից «Ջուր և առողջություն» արձանագրության վավերացմանը նպաստելն էր՝ արձանագրության հարցերի շուրջ քաղաքականության երկխոսության և որոշումների կայացման համար ֆորումի ապահովման և ճանապարհային քարտեզի մշակման միջոցով:

Սույն տեխնիկական զեկույցը պատրաստվել է՝ հիմնվելով Հայաստանի համապատասխան գերատեսչությունների հետ խորհրդակցությունների վրա: Զեկույցը վերլուծում է Հայաստանի համար արձանագրությանը միանալու առավելությունները և պահանջվող օրենսդրական և ինստիտուցիոնալ բարեփոխումները և փոփոխությունները՝ հաշվի առնելով ելակետային իրավիճակի վերլուծությունը և նախնական սահմանված ազգային նպատակները և նպատակային ժամկետները, որոնք ծրագրի շրջանակում մշակվել են ազգային փորձագետներից և միջազգային խորհրդատուից բաղկացած աշխատանքային խմբի կողմից և ընդունվել են ծրագրի ղեկավար հանձնախմբի կողմից 2014թ. մայիսին: Զեկույցում ներկայացվում են նաև ՄԱԿ-ի ԵՏՀ երկու համաձայնագրերի վերջին վավերացումների վերաբերյալ դեպքերի ուսումնասիրությունները:
Վերջին հաշվով, զեկույցն ապահովում է ՄԱԿ-ի ԵՏՀ-ԱՀԿ եվրոպական տարածաշրջանային գրասենյակի ««Ջուր և առողջություն» արձանագրության՝ 1999թ.-ին ստորագրումից ի վեր վավերացման գործընթացի ամփոփ նկարագիրը, և նախանշում է այն քայլերը, որոնք անհրաժեշտ են վավերացման գործընթացն ավարտին հասցնելու համար:

[1] FinWaterWei-ը Ֆինլանդիայի ջրային հատվածի՝ Ընդլայնվող Եվրոպայի նախաձեռնության ներքո ԱԵԿԿԱ երկրներին աջակցության ծրագիրն է: FinWaterWEI ծրագիրը ղեկավարվում է Ֆինլանդիայի արտաքին գործերի նախարարության անունից՝ Ֆինլանդիայի շրջակա միջավայրի ինստիտուտի (SYKE) կողմից (http://www.environment.fi/default.asp?contentid=405313&lan=EN)

## 2. Հայաստանի համար արձանագրությանն անդամակցության առավելությունների վերլուծություն

Հայաստանը մեծապես կշահի արձանագրությանն անդամակցելուց: Չնայած Հայաստանը չի հանդիսանում ՄԱԿ ԵՏՀ-ի Ջրային կոնվենցիայի կողմ, «Ջուր և առողջություն» արձանագրության 21-րդ և 22-րդ հոդվածները թույլ են տալիս երկրներին դառնալ արձանագրության կողմ՝ առանց Ջրային կոնվենցիայի կողմ դառնալու: Բացի այդ, արձանագրության «աղտոտողը վճարում է» սկզբունքը կիրառվում է միայն երկրի ներսում և չի կարող ծառայել որպես հիմք՝ անդրսահմանային ազդեցությունների դեպքում հոսանքն ի վար գտնվող երկրների կողմից փոխհատուցում պահանջելու համար: Ինչ վերաբերում է ազգային մակարդակով տվյալ սկզբունքի կիրառմանը, այն լիովին համահունչ է Հայաստանի Ջրային օրենսգրքին, և հատկապես՝ օրենսգրքի 5-րդ հոդվածին (Ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի կառավարման, օգտագործման և պահպանության հիմնական սկզբունքները), որտեղ հստակ նշվում է «աղտոտողը վճարում է» սկզբունքի պարտադիր կիրառման մասին:

Հոսանքն ի վար գտնվող երկրների շրջակա միջավայրի վրա որևէ ազդեցությունից զերծ պահելու համար արձանագրության 5-րդ հոդվածի «գ» ենթակետով նախատեսվում է հարևան երկրների միջև, փոխհատուցման պահանջ ներկայացնելու փոխարեն, իրականացնել խորհրդակցությունների գործընթաց:

Առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում արձանագրության 14-րդ հոդվածը, որը վերաբերում է ազգային գործողություններին հնարավոր միջազգային աջակցությանը, որոնք առնչվում են հետևյալին՝

- ջրամատակարարման և ջրահեռացման բարելավման նպատակով ջրի կառավարման ծրագրերի և սխեմաների մշակմանը՝ ֆինանսական աղբյուրների հավաքագրման նպատակով,
- նախագծերի մշակմանը, մասնավորապես՝ ուղղված ենթակառուցվածքների զարգացմանը, արձանագրության իրականացման համար օրենսդրության մշակմանը, հիմնական տեխնիկական և մասնագիտական անձնակազմի կրթությանը և վերապատրաստմանը,
- ջրի հետ կապված հիվանդությունների կանխարգելման, հսկողության և նվազեցման համար արդյունավետ միջոցների և մեթոդների հետազոտմանը և մշակմանը:

Այսպիսի մոտեցումը լիովին համահունչ է ՀՀ «Ջրի ազգային ծրագրի մասին» օրենքին, մասնավորապես, դրա միջոցառումների փուլային ծրագրին, որը ներառում է կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ միջոցառումներ՝ ուղղված իրավական պահանջներին, ինստիտուցիոնալ զարգացման, ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի կառավարման պահանջներին առնչվող խնդիրների լուծմանը:

Ի թիվս բազմաթիվ առավելությունների, որ Հայաստանը կարող է ստանալ արձանագրության կողմ դառնալու արդյունքում, հիշատակման են արժանի հետևյալ առավելությունները.

- Դառնալով արձանագրության կողմ՝ Հայաստանը կարող է միանալ կողմերի հանդիպման կողմից ստեղծած ինստիտուցիոնալ ռեժիմին՝ նրա բյուրոյին, օժանդակ մարմիններին և ՄԱԿ-ի ԵՏՀ –ԱՀԿ եվրոպական տարածաշրջանային գրասենյակի համատեղ քարտուղարությանը: Նման ինստիտուցիոնալ կառույցները կարող են Հայաստանին աջակցել՝ արձանագրության դրույթների իրականացման և հետագա զարգացման գործում, այդ թվում՝ ուղեցույցների և առաջարկությունների միջոցով: Դա կստեղծի հավաքական ֆորում, որի շրջանակում կիրականացվի փորձի փոխանակում:

- Հայաստանը զգալի օգուտներ կքաղի նաև երկրի ներսում ջրային համակարգերի կառավարման ինստիտուցիոնալ շրջանակների բարելավումից: Արձանագրությունը խրախուսում է տարբեր ոլորտների միջև համագործակցությունն ազգային և տեղական մակարդակներում, ինչպես նաև՝ պետական, մասնավոր կազմակերպությունների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների մակարդակում: Այդպիսի համագործակցությունը ներառում է տեղեկատվության և տվյալների փոխանակումը, խորհրդատվությունները, համատեղ հետազոտությունները և միջոցառումները, մասնավորապես՝ թիրախներին հասնելու համար, ինչպես նաև՝ ջրի հետ կապված հիվանդությունների մասին վաղ ազդարարման և արձագանքման համակարգերը:

- Արձանագրությունը նախատեսում է կոլեկտիվ և փորձագիտական աջակցության մեխանիզմներ, որոնք բարձրացնում են երկրի ջրային ռեսուրսների կառավարման ազգային կարողությունները, այդ թվում՝ ջրային էկոհամակարգերի պահպանության և ջրի հետ կապված հիվանդությունների կանխարգելման, վերահսկման և նվազեցման ոլորտներում:

- Արձանագրության 5-րդ հոդվածը, որը սահմանում է նախազգուշացման սկզբունքը, «աղտոտողը վճարում է» սկզբունքը, սերունդների կայուն զարգացման սկզբունքը, և այլ սկզբունքներ ու մոտեցումներ, շատ օգտակար ուղեցույց է ներքին հարաբերությունների համար, և լիովին համահունչ է Հայաստանի ջրային օրենսգրքի 5-րդ հոդվածում սահմանված սկզբունքներին, որը սահմանում է ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի կառավարման, օգտագործման և պահպանության հիմնական սկզբունքները:

- Կիրառելով ջրի հետ կապված հիվանդությունների կանխարգելման, հսկողության և նվազեցման անհատական և համատեղ միջոցառումներ, որը արձանագրության թիրախներից մեկն է՝ Հայաստանն անպայման կհասնի ավելի բարձր առողջապահական և անվտանգության չափանիշների՝ ինչպես ազգային, այնպես էլ միջազգային մակարդակներում:

- Հայաստանը կշահի նաև ջրային ռեսուրսների համապարփակ կառավարման սկզբունքի կիրառումից, որն արձանագրության հիմնական սկզբունքներից մեկն է: Արձանագրությունը խրախուսում է համապարփակ մոտեցումը՝ հաշվի առնելով հիդրոլոգիական ցիկլի, հողի, բուսական և կենդանական աշխարհի միջև բարդ փոխազդեցությունները և հաշվի առնելով այն, որ ջրային ռեսուրսները էկոհամակարգի անբաժանելի մասն են կազմում: Նման մոտեցումը լիովին համահունչ է ՀՀ ջրային օ-

ռենսգրքին, ջրի ազգային քաղաքականությանը և ջրի ազգային ծրագրին, որոնց միջոցով ՋՌՀԿ սկզբունքը և էկոհամակարգի վրա հիմնված մոտեցումը վերջին տասնամյակում ներդրվել են երկրի ջրային ռեսուրսների կառավարման մեջ:

- Արձանագրության կողմի կարգավիճակ ունենալը կարող է ուղղակիորեն կամ անուղղակիորեն ապահովել առավելություններ ծրագրերի միջազգային ֆինանսավորման մատչելիության առումով (ջրի կառավարման ծրագրերի պատրաստում, ենթակառուցվածքների զարգացում, վաղ ազդարարման և արձագանքման համակարգերի ստեղծում, օրենսդրական դաշտի զարգացում, հիմնական մասնագիտական և տեխնիկական փորձագետների կրթություն և վերապատրաստում):

Վերջին հաշվով, դառնալով արձանագրության կողմ, Հայաստանը շատ ավելի մեծ հնարավորություններ կունենա ջրի հետ կապված հիվանդությունների կանխարգելման, վերահսկման և նվազեցման ոլորտում իր նվաճումները ցուցադրելու, կոնվենցիայով կարգավորվող հարցերի վերաբերյալ որոշումների կայացման միջազգային գործընթացներին մասնակցելու և, ի տարբերություն ներկայիս իրավիճակի, գործողություններն իրականացնելու համար լրացուցիչ ֆինանսավորման և մեթոդական աջակցության դիմելու համար:

Պետք է նշել, որ արձանագրությունը չի պահանջում որևէ գործողության իրագործում, քանի դեռ տվյալ երկիրը պաշտոնապես չի ավարտել արձանագրության կողմ դառնալու գործընթացը: Առաջին կարևոր պահանջը նպատակների և նպատակային ժամկետների սահմանումն էարձանագրության կողմ դառնալուց 2 տարի անց: Չնայած Հայաստանը դեռ արձանագրության կողմ չէ, սակայն նա կատարել է դրա իրականացման համար առաջին կարևոր քայլը՝ վերջերս ՄԱԿ ԵՏՀ-FinWaterWei[2] *««Ջուր և առողջություն» արձանագրություն: Հայաստանում առողջության բարելավում՝ նպատակային ցուցանիշների սահմանման միջոցով՝ ջրի կայուն կառավարում, անվտանգ խմելու ջրի մատչելիության և պատշաճ ջրահեռացում ապահովելու նպատակով»»* ծրագրի շրջանակում մշակելով նախնական սահմանված ազգային նպատակներ և նպատակային ժամկետներ: Նախնական սահմանված նպատակները հաստատվել են Հայաստանում ՋՌՀԿ վերաբերյալ ազգային քաղաքականության երկխոսության ղեկավար հանձնախմբի 12-րդ հանդիպման ժամանակ, որը տեղի է ունեցել 2014թ. մայիսի 6-ին: Վերջնական համաձայնեցված թիրախները արդեն ներկայացվել են բնապահպանության նախարարություն՝ դրանք շահագրգիռ նախարարությունների շրջանում տարածելու և դրանց վերաբերյալ պաշտոնական կարծիքը ստանալու համար:

[2] FinWaterWei-ը Ֆինլանդիայի ջրային հատվածի՝ Ընդլայնվող Եվրոպայի նախաձեռնության ներքո ԱԵԿԿԱ/երկրներին աջակցության ծրագիրն է: FinWaterWEI ծրագիրը ղեկավարվում է Ֆինլանդիայի արտաքին գործերի նախարարության անունից՝Ֆինլանդիայի շրջակա միջավայրի ինստիտուտի (SYKE) կողմից (http://www.environment.fi/default.asp?contentid=405313&lan=EN)

## 3. Պահանջվող օրենսդրական և ինստիտուցիոնալ փոփոխություններ

### *3.1 Ամփոփում*

Հայաստանի ջրային ոլորտում առկա օրենսդրական և ինստիտուցիոնալ շրջանակների համար արձանագրության չափանիշներին և մոտեցումներին էական ադապտացման և համապատասխանեցման պահանջ չկա՝ հաշվի առնելով, որ արձանագրության շատ պահանջներ Հայաստանում արդեն գործում են, ներառյալ՝ հետևյալը.

- Արձանագրությունն ընդգծում է, որ ջրային ռեսուրսների կառավարումը հնարավորինս պետք է իրականացվի համալիր կերպով՝ հիմնվելով գետավազանների վրա, նպատակ ունենալով ապահովել սերտ կապը սոցիալ-տնտեսական զարգացման և բնական էկոհամակարգերի պահպանության միջև, ինչպես նաև ջրային ռեսուրսների կառավարման և օրենսդրական միջոցառումների միջև հարաբերությունները՝ շրջակա միջավայրի այլ ասպեկտների որակը կարգավորելու համար: Նման մոտեցումը լիովին համահունչ է Հայաստանի ջրային օրենսգրքին, և հատկապես 5-րդ հոդվածին, որը սահմանում է ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի կառավարման, օգտագործման և պահպանության հիմնական սկզբունքները:

- Արձանագրությունը պահանջում է, որ հասարակության բոլոր անդամները, հատկապես նրանք, ովքեր անապահով են կամ տառապում են սոցիալական մեկուսացումից, ունենան ջրի հավասարաչափ հասանելիություն՝ քանակի և որակի առումներով: Սա համահունչ է «Հայաստանի Հանրապետության ջրի ազգային քաղաքականության հիմնադրույթների մասին» օրենքի 6-րդ հոդվածին, որը սահմանում է ջրի ազգային քաղաքականության սկզբունքները: Մասնավորապես, այն պահանջում է Հայաստանում ջրային ռեսուրսների կայուն կառավարման ապահովում՝ կիրառելով մի քանի սկզբունքներ, այդ թվում՝ պահանջվող քանակի և որակի ջրի ապահովում՝ սոցիալապես խոցելի խմբերի հիմնական կարիքները բավարարելու նպատակով:

- Տեղեկատվության մատչելիությունը և հասարակության մասնակցությունը ջրային և առողջապահական հարցերի վերաբերյալ որոշումների կայացման գործընթացին, ի թիվս այլ բաների, անհրաժեշտ են՝ որոշումների որակը բարելավելու, հանրությանը համապատասխան հարցերի շուրջ տեղեկացնելու, ինչպես նաև հանրությանը՝ իր մտահոգությունները արտահայտելու, իսկ իրավասու մարմիններին՝ այդ մտահոգությունները պատշաճորեն հաշվի առնելու համար հնարավորություններ ընձեռելու նպատակով: Հայաստանում գործող իրավական դաշտը ևս նախատեսում է այս մոտեցումը: Այսպես՝ ՀՀ ջրային օրենսգիրքը ներառում է դրույթներ՝ տեղեկատվության մատչելիության և որոշումների կայացման գործընթացում հանրային մասնակցության վերաբերյալ: Մասնավորապես, օրենսգրքի 5-րդ հոդվածը (Ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի կառավարման, օգտագործման և պահպանության հիմնական սկզբունքները) ճանաչում է հանրային մասնակցության իրազեկման կարևորությունը ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության գործընթացում: Օրենսգրքի 20-րդ հոդվածը (հանրային մասնակցություն) թվարկում է այն հարցերը, որոնք ենթակա են հրապարակային ծանուցման (գետավազանային կառավարման նախագծային պլաններ, ջրօգտագործման տրամադրվող թույլտվություններ, ջրի սակագնային ռազմավարության նախագիծ և ջրի ստանդարտների նախագծեր) և 106-րդ

հոդվածը (հասարակական կազմակերպությունների և քաղաքացիների մասնակցությունը ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի պահպանությանը) սահմանում է հասարակական կազմակերպությունների դերը և հանրային մասնակցությունը ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի պահպանման գործում և նշում է, որ, ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի պահպանությանն ուղղված գործունեության ժամանակ լիազորված պետական կառավարման մարմիններն իրավունք ունեն հաշվի առնել հասարակական կազմակերպությունների և քաղաքացիների առաջարկությունները:

### *3.2. Իրավական դաշտ*

Հայաստանի Հանրապետությունում ջրային ռեսուրսների կառավարման ոլորտի բարեփոխումները սկսվել են 1999-2000թթ. Համաշխարհային բանկի աջակցությամբ մշակված «Ջրային ռեսուրսների համապարփակ կառավարման ծրագրի» իրականացումից: Ծրագրի իրականացման արդյունքում գնահատվել են հանրապետության ջրային ռեսուրսները, առաջարկվել է կառավարման կառուցվածքային բարեփոխումների ծրագիր, ինչպես նաև ձևավորվել է ջրերի առաջարկի և պահանջարկի կառավարման ուրվագիծը: Բացի այդ, առաջարկվել է նաև գետավազանային կառավարման գաղափարը՝ ջրային ռեսուրսների տարեկան և հեռանկարային պլանավորման մեխանիզմների ներդրման միջոցով:

Հաշվի առնելով «Ջրային ռեսուրսների համապարփակ կառավարման ծրագրի» առաջարկությունները՝ 2001թ.-ին ՀՀ կառավարությունը նախաձեռնեց երկրի ջրային ոլորտի կառավարման արդիականացմանը նպատակաուղղված ծրագիր, վերանայեց գործող իրավական դաշտը և հստակեցրեց ինստիտուցիոնալ հիմքերը: Այս ամենն ամրագրվեց 2001թ. փետրվարին ՀՀ կառավարության կողմից ընդունված «Հայաստանի ջրային ոլորտի բարեփոխումների հայեցակարգի մասին» թիվ 92 որոշմամբ:

Ելնելով կառավարության վերոհիշյալ թիվ 92 որոշումից՝ Հայաստանը 2002թ. հունիսի 4-ին ընդունեց նոր Ջրային օրենսգիրք, որը համարվում է կարևորագույն քայլերից մեկը ջրային ոլորտի բարեփոխումներում: Ջրային օրենսգիրքը մատնանշում է միջազգային լավագույն փորձին համահունչ ջրային ռեսուրսների կառավարման հետագա ուղին: Այն հայտարարում է, որ Հայաստանում ջրային ռեսուրսները համարվում են պետական սեփականություն, և ապահովում, որ դրանց օգտագործումը և տնօրինումը վերահսկվի տնտեսական գործիքների միջոցով, ջրօգտագործման թույլտվությունների օգտագործմամբ, որոնք պետք է տրվեն և կիրարկվեն՝ պետական ջրային կադաստրում ներառված մոնիթորինգի տեղեկությունների հիման վրա: Ջրային օրենսգրքի կարևոր նորամուծություններն ամրագրում են ջրային ռեսուրսների կառավարման ավազանային ուղղվածության սկզբունքները և հանրային իրազեկման և մասնակցության կարևորությունը: Ջրային օրենսգիրքը սահմանում է Հայաստանում ջրային ռեսուրսների կառավարման հավասարակշռված մոտեցումը՝ նշելով ջրի ոլորտում պատշաճ կարգավորման, կառավարման և գործառնական ստորաբաժանումների պարտականություններին վերաբերող սկզբունքները: Այն նաև սահմանում է այն նոր կառավարման մարմինները, որոնք պետք է իրականացնեն նշված պարտականությունները:

2005թ.-ին ընդունվեց Հայաստանի Հանրապետության, «Ջրի ազգային քաղաքականության հիմնարար դրույթներ մասին» օրենքը, որը ներկայացնում է ջրային ռեսուրսների և

ջրային համակարգերի ռազմավարական օգտագործման և պահպանության երկարաժամկետ զարգացման հայեցակարգ: 2006թ.-ին ընդունվեց «Հայաստանի Հանրապետության ջրի ազգային ծրագրի մասին» օրենքը: Օրենքի ընդհանուր նպատակն է մշակել միջոցառումներ՝ ուղղված բնակչության և տնտեսության կարիքների բավարարմանը, էկոլոգիական կայունության ապահովմանը, ռազմավարական ջրային պաշարի ձևավորմանն ու օգտագործմանը և ազգային ջրային պաշարի պահպանությանը:

Հայաստանի նոր ջրային օրենսգրքի պատշաճ կիրառումն ապահովելու համար 2002թ.-ից սկսած ընդունվել է ավելի քան 120 նորմատիվ և ենթաօրենսդրական ակտ, որոնք վերաբերում են ջրօգտագործման թույլտվությունների տրման ընթացակարգերին, գետավազանային կառավարմանը, թափանցիկությանը և որոշումների կայացման գործընթացում հանրային մասնակցությանը, տեղեկատվության մատչելիությանը, պետական ջրային կադաստրի ստեղծմանը, ջրային ռեսուրսների մոնիթորինգի ձևավորմանը, անդրսահմանային ջրային ռեսուրսների կառավարմանը, մակերևութային ջրի որակի նոր ստանդարտներին, գետավազանային կառավարման մոդելային պլանի բովանդակությանը և այլն:

Այսպիսով, ընդհանուր առմամբ, Հայաստանի իրավական դաշտն, արդեն գոյություն ունի, և «Ջուր և առողջություն» արձանագրությունն իրականացնելու համար էական փոփոխություններ չեն պահանջվում: Բացի այդ, Հայաստանի կառավարությունը ընդունել է մի շարք օրենքներ և իրավական ակտեր՝ արձանագրության մի շարք դրույթների կատարումն ապահովելու համար: Սա ներառում է, մասնավորապես, հետևյալը:

*Աղյուսակ 1 - Իրավական ակտերի ամփոփում, որոնք ներառում են «Ջուր և առողջություն» արձանագրության դրույթները*

| Իրավական ակտի տեսակը | Անվանումը | Ընդունման տարեթիվը | Մեկնաբանություն |
|---|---|---|---|
| Սահմանադրություն | ՀՀ Սահմանադրություն | 1995 | Ըստ 31-րդ հոդվածի, պետությունը պաշտպանում է սպառողների շահերը, իրականացնում է միջոցառումներ՝ ապրանքների, ծառայությունների և աշխատանքների որակի վերահսկողության ուղղությամբ:<br>33-րդ հոդվածն ընդգծում է, որ յուրաքանչյուր ոք իրավունք ունի ապրելու իր առողջությանը և բարեկեցությանը նպաստող շրջակա միջավայրում: |
| Օրենսգիրք | Հողային օրենսգիրք | 2001 | Հոդված 26-ը պարունակում է դրույթներ ջրային հողերի վերաբերյալ, որոնք, ի թիվս այլ բաների, կարող են օգտագործվել բնակչության խմելու ջրի մատակարարման, ինչպես նաև սանիտարական պահպանության գոտիների համար, բնակչության առողջության վրա այլ աղբյուրներից որևէ ազդեցություն կանխելու համար: |
| Օրենսգիրք | Ջրային օրենսգիրք | 2002 | Օրենսգրքի հիմնական նպատակներից են՝ ջրային ռեսուրսների պահպանությունը և պաշտպանությունը, ջրի վրա վնասակար ազդեցության կանխարգելումը, բնակչությանն անհրաժեշտ քանակի և որակի ջրի մատակարարման ապահովումը, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի անվտանգ և անխափան գործունեությունը և ջրային համակարգերի կառավարման, պահ- |

| Իրավական ակտի տեսակը | Անվանումը | Ընդունման տարեթիվը | Մեկնաբանություն |
|---|---|---|---|
| | | | պանման և զարգացման կազմակերպումը:<br>Օրենսգրքի 20-րդ հոդվածը ներառում է դրույթներ՝ որոշումների կայացման գործընթացներին հանրության մասնակցության ապահովման և հանրային իրազեկվածության բարձրացման մասին:<br>Հոդված 70-ը ներառում է խմելու ջրի ստանդարտներին վերաբերող դրույթներ, իսկ հոդված 120-ը նշում է որոշակի խմելու ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի շահագործման ասպեկտները:<br>Օրենսգրքի հոդվածներ 101-ը և 103-ը ներառում են դրույթներ՝ գյուղատնտեսական հողատարածքների կեղտաջրերով ոռոգման մասին: |
| Օրենք | ՀՀ բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին | 1992 | Օրենքը սահմանում է բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման իրավական, տնտեսական և կազմակերպական հիմքերը, ինչպես նաև պետության կողմից նախատեսվող այն երաշխիքները, որոնք բացառում են մարդու օրգանիզմի վրա շրջակա միջավայրի վնասակար և վտանգավոր գործոնների ազդեցությունը և բարենպաստ պայմաններ ապահովում նրա և ապագա սերունդների կենսունակության համար:<br>Հոդված 16-ը մատնանշում է բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման ընդհանուր պահանջները բնակչության ջրամատակարարման և ջրօգտագործման բնագավառում, ներառյալ՝ օգտագործվող ջրի որակը և խմելու ջրի աղտոտման կանխարգելումը և կրճատումը: |
| Օրենք | Տեղեկատվության ազատության մասին | 2003 | Օրենքն ապահովում է, ի թիվս այլ բաների, հանրությանը մատուցվող ծառայությունների, ներառյալ՝ ջրամատակարարման ծառայությունների մասին տեղեկատվության մատչելիությունը և հանրային իրազեկումը: Համաձայն 12-րդ հոդվածի, տեղեկատվություն տնօրինողը պարտավոր է ապահովել տեղեկությունների մատչելիությունը և հրապարակայնությունը և տեղեկություններ փնտրող անձին տրամադրել հավաստի և իր տնօրինության տակ գտնվող ամբողջական տեղեկություն: |
| Օրենք | Ջրի ազգային քաղաքականության հիմնարար սկզբունքները | 2005 | Օրենքը սահմանում է ջրային ռեսուրսների ռազմավարական օգտագործման և պահպանության հիմնական հասկացությունները և ուղղված է պահանջվող քանակի և որակի ջրային ռեսուրսների մատչելիության ապահովմանը՝ ներկայում և ապագայում մարդկային բարեկեցության, սոցիալ-տնտեսական զարգացման, ինչպես նաև տնտեսական և էկոլոգիական կարիքները բավարարելու համար:<br>Օրենքի խնդիրներն են՝ (ա) ապահովել ջրային ռեսուրսների մատչելիության գնահատման, ազգային ջրային պաշարի բնութագրման, ջրային ռեսուրսների առաջարկի և պահանջարկի ձևավորման գործընթացի իրականացումը, (բ) սահմանել ջրային ռեսուրսների օգտագործման գերակայությունները և (գ) ներդնել ջրավազանային կառավարման սկզբունքները, կազմել ջրավազանային կառավար- |

| Իրավական ակտի տեսակը | Անվանումը | Ընդունման տարեթիվը | Մեկնաբանություն |
|---|---|---|---|
| | | | ման պլանները և նախապատրաստել Ջրի ազգային ծրագրի հիմքերը: |
| Օրենք | Ջրի ազգային ծրագրի մասին | 2006 | Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի ջրի ազգային ծրագրի հաստատման և իրականացման հետ կապված հարաբերությունները, ներառյալ՝ ազգային ջրային պաշարի, ռազմավարական ջրային պաշարի, օգտագործելի ջրային ռեսուրսների և ջրի նկատմամբ պահանջարկի գնահատումը և ջրի ոլորտի պահպանման և զարգացման հիմնական խնդիրները և հեռանկարները:<br>Օրենքը սահմանում է ջրամատակարարման ոլորտի հետևյալ գերակա խնդիրները. խմելու ջրի համակարգերի կայուն շահագործման ապահովում, կառավարման մեխանիզմների կատարելագործում, ջրամատակարարման ընկերությունների ֆինանսական կայունության ապահովում, հուսալի և անընդհատ ջրամատակարարման ապահովում, բնակչության համար ջրամատակարարման ծառայությունների մատչելիության բարձրացում, անապահով սպառողներին ջրային ծառայություններից օգտվելու հնարավորության ապահովում, ջրային համակարգերի շահագործման, ջրամատակարարման ծառայությունների մատուցման և համակարգերի մասնակցային կառավարման զարգացման ոլորտում մասնավոր հատվածի ներգրավում, ջրամատակարարման ծառայություններ տրամադրող ընկերությունների գործունեության նկատմամբ մոնիթորինգի, վերահսկողության իրականացում, խմելու ջրամատակարարման ծառայությունների որակի և կառավարման նկատմամբ հսկողության ապահովում, ջրօգտագործողների կողմից ջրամատակարարման մոնիթորինգի իրականացման բարելավում, որն ուղղված է լինելու ջրային ռեսուրսներն աղտոտումից պաշտպանելուն, ջրի հաշվառման համակարգի ներդրում, ջրամատակարարման համակարգում ջրակորուստների նվազեցում, ջրամատակարարման ծառայությունների բարելավման նպատակով ներդրումների անհրաժեշտ ծավալների ներգրավում, ջրամատակարարման համակարգերի վերականգնման, կառուցման և շահագործման գործընթացում արդիական տեխնոլոգիաների կիրառում: |
| Կառավարության որոշում | Շրջապատի համար վտանգ ներկայացնողի իվանդությունների ցանկը հաստատելու մասին | 2001 | Ցանկը ներառում է ջրով փոխանցվող բոլոր տեսակների վարակիչ հիվանդությունները՝ աղիքային վարակիչ հիվանդություններ (բոլոր ձևերը), վիրուսային հեպատիտներ, տուլարեմիա և այլն: Բուժման ծավալները ներառվում են յուրաքանչյուր տարի հաստատվող պետական պատվերի չափանիշներում՝ վարակիչ հիվանդությունների մասով: |
| Կառավարության որոշում | Ջրի կառավարման համակարգի բարեփոխման մասին | 2001 | Որոշումը սահմանում է երկրում ջրի ոլորտի բարեփոխման մոտեցումը, ներառյալ՝ ջրամատակարարման ընկերությունների ֆինանսական առողջացումը, այդ ընկերությունների ծառայությունների որակի բարելավումը, սակագնային քաղաքականության բարելավումը և ոլորտում տնտեսական բարեփոխումների իրականացումը: |

| Իրավական ակտի տեսակը | Անվանումը | Ընդունման տարեթիվը | Մեկնաբանություն |
|---|---|---|---|
| Կառավարության որոշում | Ստորերկրյա ջրերի շահագործական պաշարների կանխատեսումային ռեսուրսների դասակարգումը հաստատելու մասին | 2002 | Որոշումն ապահովում է Հայաստանում ստորերկրյա ջրերի շահագործական պաշարների և գնահատված ռեսուրսները դասակարգումը: |
| Կառավարության որոշում | Ջրային ռեսուրսներից ջրօգտագործողներին հատկացվող ջրառի չափաքանակների և ռեժիմի որոշման կարգը հաստատելու մասին | 2003 | Որոշումն ուրվագծում է ջրառի քանակների և ջրային ռեսուրսների օգտագործման ռեժիմների հիմնական սկզբունքները և հիմքը՝ ըստ ջրօգտագործման նպատակի: |
| Կառավարության որոշում | Ազատ ջրօգտագործման կարգը հաստատելու մասին | 2003 | Որոշումը կանոնակարգում է, ի թիվս այլ հարցերի, ազատ ջրօգտագործմանն առնչվող իրավահարաբերությունները, ներառյալ՝ անձի սեփականություն հանդիսացող հողամասում գրունտային ջրերի օգտագործումը: Որոշման մեջ նշվում է, որ ազատ ջրօգտագործումը կարող է սահմանափակվել, եթե առկա է ջրի միջոցով փոխանցվող հիվանդությունների տարածման վտանգ, և եթե ջրային ռեսուրսն աղտոտված է այն չափով, որ կարող է վնաս հասցնել մարդկանց կյանքին և առողջությանը: |
| Կառավարության որոշում | Անձի սեփականություն հանդիսացող հողամասում գրունտային ջրերի օգտագործման կարգը հաստատելու մասին | 2003 | Որոշումը սահմանում է անձի սեփականություն հանդիսացող հողամասում գրունտային ջրերի օգտագործման գործընթացը: |
| Կառավարության որոշում | Ջրահեռացման համակարգերի օգտագործման և հեռացվող ջրերի մաքրման կանոնները սահմանելու մասին | 2003 | Որոշմամբ սահմանվում են ջրահեռացման համակարգերի օգտագործման և հեռացվող ջրերի մաքրման կազմակերպումը, ջրահեռացման ցանցի շահագործման խնդիրներն ու տեխնիկական վիճակի նկատմամբ հսկողության մեխանիզմները, ջրահեռացման համակարգերի մաքրման կառուցվածքները, դրանց լաբորատոր-արտադրական և տեխնոլոգիական հսկողության մեխանիզմները, կեղտաջրերի մեխանիկական և կենսաբանական մաքրման կառուցվածքների, ինչպես նաև կեղտաջրերի նստվածքների մշակման կառուցվածքների տեսակները, շահագործման կարգը և դրանց նկատմամբ հսկողության մեխանիզմները: |
| Կառավարության որոշում | Ջրերի հաշվառման այլընտրանքային կարգը հաստատելու մասին | 2003 | Որոշմամբ սահմանվում են ջրառի ծավալների հաշվարկման հիմնական սկզբունքներն Հայաստանի այն տարածքներում, որոնք չունեն գործող հիդրոլոգիական դիտակետեր: |
| Կառավարության որոշում | Ցամաքուրդային ջրերի օգտագործման կարգը հաստատելու մասին | 2003 | Որոշումը սահմանում է դրենաժային/ցամաքուրդային ջրերի օգտագործման կարգը՝ հաշվի առնելով պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների և իրավաբանական և ֆիզիկական անձանց հարաբերությունները: |
| Կառավարության | Անդրսահմանային ջրային ռեսուրսների | 2003 | Որոշումը սահմանում է Հայաստանի անդրսահմանային ջրային ռեսուրսների տարբեր ցուցանիշների ու ռեժիմնե- |

| Իրավական ակտի տեսակը | Անվանումը | Ընդունման տարեթիվը | Մեկնաբանություն |
|---|---|---|---|
| որոշում | մասին տեղեկատվության ապահովման կարգի մասին | | րի մասին տեղեկատվության տրամադրման կարգը: |
| Կառավարության որոշում | Ջրային ռեսուրսների մոնիթորինգի իրականացման և դրա մասին հաշվետվությունների գրանցման կարգը հաստատելու մասին | 2003 | Որոշումը սահմանում է ջրային ռեսուրսների մոնիթորինգի, օպերատիվ տվյալների հավաքման, մշակման և կազմման և հաշվետվությունների գրանցման կարգը: |
| Կառավարության որոշում | Ձկնաբուծական տնտեսությունների կարիքների համար ջրային ռեսուրսների օգտագործման կարգը հաստատելու մասին | 2003 | Որոշումը սահմանում է ձկնաբուծության կարիքների համար ջրային ռեսուրսների օգտագործման գործառույթները: |
| Կառավարության որոշում | Բնական բուժիչ ջրային ռեսուրսների օգտագործման կարգը հաստատելու մասին | 2003 | Որոշումը սահմանում է բնական բուժիչ ջրային ռեսուրսների օգտագործման կարգը: |
| Կառավարության որոշում | Կեղտաջրերի ցամաքուրդային ջրերի ընդունման համար կլանող հորատանցքերի, սպառված հանքավայրերի, հանքահորերի ու բաց հանքերի օգտագործման և արտահոսքի թույլտվության կարգը հաստատելու մասին | 2003 | Որոշումը սահմանում է դրենաժային ջրերը կլանող հորերի, նախկին և գործող հանքավայրերի ջրի օգտագործման և թողքի թույլտվություն տալու կարգը: |
| Կառավարության որոշում | Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման կանոնների, ջրամատակարարման և ջրահեռացման պայմանագրերի օրինակելի ձևերը, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերին միացման տեխնիկական պայմանների սահմանման կարգը հաստատելու մասին | 2004 | Այս որոշմամբ և որոշման հավելվածով սահմանված կանոններով սահմանվում են խմելու ջրի մատակարարման ու ջրահեռացման, մատկարարվող ջրի և հեռացվող կեղտաջրերի հաշվառման ու դրանց դիմաց վճարման, խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման համակարգերին միացման տեխնիկական պայմանների սահմանման կարգերը և կանոններով կարգավորվող հարաբերությունների մասնակիցների իրավունքներն ու պարտականությունները: |
| Կառավարության որոշում | Ջրաէկոհամակարգերի սանիտարական պահպանման, հոսքի ձևավորման, ստորերկրյա ջրերի պահ- | 2005 | Որոշմամբ հաստատվում են Հայաստանում ջրաէկոհամակարգերի սանիտարական պահպանման, հոսքի ձևավորման, ստորերկրյա ջրերի պահպանման տարածքների սահմանման չափորոշիչները և ջրապահպան, էկոտոնի և անօտարելի գոտիների տարածքների փաստացի չափերն |

| Իրավական ակտի տեսակը | Անվանումը | Ընդունման տարեթիվը | Մեկնաբանություն |
|---|---|---|---|
| | պանման, ջրապահ-պան, էկոտոնի և անօտարելի գոտիների տարածքների սահմանման չափորոշիչների մասին | | ու սահմանագծերը:<br>Որոշման հավելվածը սահմանում է ջրաէկոհամակարգերի սանիտարական պահպանման, հոսքի ձևավորման, ստորերկրյա ջրերի պահպանման տարածքների և ջրապահպան, էկոտոնի և անօտարելի գոտիների տարածքների փաստացի չափերի ու սահմանագծերի չափորոշիչները: |
| Կառավարության որոշում | Ջրերի ստանդարտների սահմանման կանոնակարգերի մասին | 2005 | Որոշումը սահմանում է խմելու, տնտեսական և կուլտուրակենցաղային կարիքները բավարարելու համար ջրի որակի ստանդարտների մշակման ընթացակարգը՝ հաշվի առնելով ջրային տնտեսության ոլորտի պետական լիազոր մարմնի առաջարկությունները: Մասնավորապես, համաձայն որոշման, խմելու և տնտեսական նպատակով օգտագործվող ջուրը պետք է համապատասխանի մարդկանց՝ անկախ տարիքից ու սեռից, առողջության, ներկա և ապագա սերունդների համար անվտանգ մանրէաբանական, ճառագայթային, օրգանոլեպտիկ, վնասակար նյութերի սանիտարական նորմաներով ու կանոններով սահմանված ցուցանիշներին և Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի 70-րդ հոդվածի դրույթներին: |
| Կառավարության որոշում | Ջրային ռեսուրսների օգտագործման և պահպանության արտակարգ իրավիճակի ռեժիմներ սահմանելու կարգի, հրահանգների և բնակչությանը մատակարարվող խմելու ջրի նվազագույն չափաքանակների, ինչպես նաև ջրային համակարգի կառավարչի կրած վնասների փոխհատուցման կարգի մասին | 2005 | Որոշումը նախատեսում է ցուցումներ՝ աղետի գոտիներում ջրային ռեսուրսների օգտագործման և պահպանության, այդ թվում՝ աղետի գոտիներում գտնվող խմելու ջրի աղբյուրների համար: |
| Կառավարության որոշում | Ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման, ջրային ռեսուրսների մոնիթորինգի, աղտոտման նվազեցման ու կանխարգելիչ միջոցառումների բարելավման սահմանման մասին | 2010 | Որոշումը սահմանում է ջրային ռեսուրսների կառավարման առաջնային տեխնոլոգիաները, որոնց կիրառումը կապահովի ջրի որակի և քանակի կայուն երկարաժամկետ կառավարում և, մասնավորապես, ապահովելով ջրային ռեսուրսների պատշաճ որակ, ջրի կորուստների կրճատում և ջրային ռեսուրսների ավելի արդյունավետ օգտագործում: |
| Կառավարության որոշում | Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազա- | 2011 | Օրենքը հիմնված է ԵՄ ջրի շրջանակային դիրեկտիվի սկզբունքների և մոտեցումների վրա և սահմանում է մակերևութային ջրերի փոխադարձ հարաբերությունների համակարգը՝ ըստ ջրի օգտագործման նպատակի կամ ռ- |

| Իրավական ակտի տեսակը | Անվանումը | Ընդունման տարեթիվը | Մեկնաբանություն |
|---|---|---|---|
| | նային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին | | բակի դասի: Այն նաև սահմանում է մակերևութային ջրերի համար առաջարկվող բնապահպանական նորմերը և սահմանում է մակերևութային ջրերի որակի նորմերը երկրի 14 խոշոր գետերի ավազանների և գետերի առանձին բաժինների համար: |
| Կառավարության որոշում | Խմելու, կենցաղային և գյուղատնտեսական նպատակներով ՀՀ ջրավազանային կառավարման տարածքների օգտագործման համաձայն՝ ջրի պահանջարկը սահմանելու, ինչպես նաև բնապահպանական հոսքերի գնահատման մասին | 2011 | Որոշումը նպատակ ունի ապահովել ջրային ռեսուրսների էկոլոգիական հավասարակշռություն, ազգային ջրային պաշարի պահպանություն և ջրային ռեսուրսների կառավարման արդյունավետ կազմակերպում: |
| Նախարարի հրաման | Առողջապահության նախարարի հրամանը «Սանիտարական աղբյուրների համար սանիտարական պահպանության գոտիները սահմանելու մասին» | 2002 | Համաձայն հրամանագրի, սահմանվում է սանիտարական պահպանության երեք գոտի: Առաջին գոտին (խիստ ռեժիմ) ներառում է տեղանքի ջրառի և ջրամատակարարման և կոյուղու ընկերությունների կառավարման տակ գտնվող տեղավայրերը: Առաջին գոտին նախատեսված է ջրառի և ջրամատակարարման կառույցները աղտոտումից և վնասից պաշտպանելու համար: Երկրորդ և երրորդ գոտիները (սահմանափակ ռեժիմ) ներառում են այն տարածքները, որոնք նախատեսված են ջրամատակարարման աղբյուրների աղտոտվածությունը կանխարգելելու համար: Երեք գոտիներից յուրաքանչյուրում, համաձայն իրենց նպատակի, սահմանվում են հատուկ ռեժիմներ և միջոցառումների ցանկ՝ ջրի որակի վատթարացումը կանխարգելելու համար: |
| Նախարարի հրաման | Խմելու ջուր: Ջրամատակարարման կենտրոնացված համակարգերի ջրի որակին ներկայացվող պահանջներ: Որակի հսկողության սանիտարական կանոններ և նորմեր | 2002 | Հրամանով սահմանվում են խմելու ջրի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջները, ինչպես նաև արտադրվող և բնակավայրերին ջրամատակարարման համակարգերով տրվող խմելու ջրի որակի հսկողության կանոնները: |

Միակ բացը իրավական ոլորտում, որին պետք է անդրադառնալ, «Խմելու ջրի մասին» օրենքի մշակումն է, որը պահանջվում է նաև ՀՀ ջրային օրենսգրքի 121-րդ հոդվածով (Անցումային դրույթներ): Ի դեպ, օրենքի նախագիծը ենթադրվում էր մշակել ջրային օրենսգրքի ընդունումից հետո՝ 2 տարվա ընթացքում, սակայն այն դեռևս չի իրականացվել:

### *3.3. Ինստիտուցիոնալ դաշտ*

Հայաստանում 2002թ.-ին նոր ջրային օրենսգրքի ընդունմամբ ներդրվեց նոր ինստիտուցիոնալ համակարգ, ըստ որի, ջրային տնտեսության կառավարումն իրականացնում են հետևյալ մարմինները՝

1. ՀՀ բնապահպանության նախարարությունը և իր ջրային ռեսուրսների կառավարման գործակալությունը, որն իրականացնում է ջրային ռեսուրսների պահպանություն և կառավարում,
2. ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեն, որն իրականացնում է պետական սեփականություն հանդիսացող ջրամատակարարման համակարգերի կառավարում,
3. ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը, որն իրականացնում է սակագնային քաղաքականություն ջրային հարաբերություններում:

*Աղյուսակ 2 - Ջրային ոլորտի կառավարման մեջ ներգրավված գերատեսչությունների հիմնական գործառույթները*

| | Ջրային ռեսուրսների կառավարում և պահպանություն | Սակագների կարգավորում | Ջրային ռեսուրսների կառավարում |
|---|---|---|---|
| Պատասխանատու գերատեսչություն | Ջրային ռեսուրսների կառավարման գործակալություն | Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով | Ջրային տնտեսության պետական կոմիտեն |
| Հիմնական գործառույթները | Ջրային ռեսուրսների մոնիթորինգ և տեղաբաշխում, ջրային ռեսուրսների ռազմավարական կառավարում և պահպանության | Սակագների կարգավորումը խմելու, կենցաղային և ոռոգման ջրի ոլորտներում ոչ մրցակցային ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների համար<br><br>Սպառողների իրավունքների պաշտպանություն | Պետական սեփականություն հանդիսացող ջրամատակարարման համակարգերի կառավարում, աջակցություն ջրօգտագործողների ընկերությունների և միությունների ստեղծմանը, ինչպես նաև ջրային համակարգերի կառավարման մրցույթների կազմակերպմանը: |
| Կիրարկման գործիքներ | Ջրօգտագործման թույլտվություն | Ջրային համակարգի օգտագործման թույլտվություն | Կառավարման պայմանագիր |

Ջրային ռեսուրսների ավելի արդյունավետ, նպատակային և ապակենտրոնացված կառավարումը խթանելու նպատակով, ՀՀ ջրային ռեսուրսների կառավարման գործակալությանը կից ստեղծվել է 6 տարածքային ստորաբաժանում (Հյուսիսային, Ախուրյան, Արարատյան, Սևանի, Հրազդանի և Հարավային):

Ամփոփ տեղեկություններ ՀՀ ջրավազանային կառավարման տարածքների վերաբերյալ

| Ջրավազանային կառավարման տարածք | Մակերես կմ² | Օգտագործելի ջրային ռեսուրսներ մլն մ³/տարի | Ռազմավարական ջրային պաշար մլն մ³/տարի | Ազգային ջրային պաշար մլն մ³/տարի |
|---|---|---|---|---|
| Հյուսիսային | 7185 | 1897 | 59.2 | 63.3 |
| Սևանի | 6225 | 2068 | 500 | 34583.6 |
| Հրազդանի | 2565 | 733 | 229.3 | 254.1 |
| Արարատյան | 4256 | 1306 | 229 | 245.3 |
| Ախուրյանի | 5024 | 1602 | 564 | 608.2 |
| Հարավային | 4481 | 1443 | 90.5 | 101.1 |
| Ընդամենը | 29736 | 9049 | 1672 | 35855.6 |

*Նկար 1 – Հայաստանի ջրավազանային կառավարման տարածքները*

Ջրավազանային տարածքային կառավարման բաժինները պատասխանատու են ավազանային մակարդակով ջրավազանային կառավարման պլանների մշակման, ջրօգտագործման թույլտվությունների գրանցման, ջրային ռեսուրսների պահպանության ապահովման, ջրօգտագործման թույլտվություններով ամրագրված պայմանների իրավակիրարկման, ջրառի ռեժիմի սահմանման, ինչպես նաևստեղծված վեց ջրավազանային կառավարման տարածքների համար ջրային ռեսուրսների բաշխման պլանների մշակման համար:

Հայաստանում «Ջուր և առողջություն» արձանագրության շրջանակ մեկ այլ կարևոր խաղացող է ՀՀ առողջապահության նախարարությունը, որը պատասխանատու է բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման համար: Իր կառուց-

վածքային ստորաբաժանումների միջոցով, նախարարությունը մշակում և վերահսկում է սանիտարական-համաճարակաբանական կանոնակարգերը և ստանդարտների իրականացնումը, այդ թվում նաև՝ խմելու ջրի ոլորտում: Այն նաև ստուգումների միջոցով վերահսկում է խմելու նպատակով օգտագործվող ջրային աղբյուրների ջրի որակը:

2013թ.-ին ՀՀ առողջապահության նախարարությունում տեղի ունեցան կառուցվածքային վերակազմավորումներ: Մասնավորապես, ՀՀ առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչությունը և ՀՀ աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարության աշխատանքի պետական տեսչությունը միավորվեցին ՀՀ առողջապահության նախարարության պետական առողջապահական տեսչության մեջ: Նորաստեղծ տեսչությունը, ի թիվս այլ գործառութերի. (ա) ապահովում է բնակչության սանիտարական անվտանգությունը, (բ) իրականացնում է պետական հիգիենիկ և հակահամաճարակային հսկողություն, և (գ) կազմակերպում է սանիտարական-հիգիենիկ և հակահամաճարակային միջոցառումներ և կանխարգելիչ գործողություններ վարակիչ և ոչ վարակիչ, այդ թվում՝ ջրի հետ կապված հիվանդությունների վերահսկման նպատակով:

2013թ.-ին մի շարք պետական ոչ առևտրային կազմակերպությունների և ՓԲԸ-ների միավորման արդյունքում, ՀՀ առողջապահության նախարարությանը կից ստեղծվեց «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ը: Նորաստեղծ կենտրոնը, ի թիվս այլ գործառույթների, պատասխանատու է՝ (ա) վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելմանն ուղղված համալիր միջոցառումների իրականացման, (բ) վարակիչ և մակաբուծական հիվանդությունների աղբյուրների ախտահանման, (գ) հասարակական անվտանգության սպառնալիքների դեպքում բնակչության պատրաստվածության և արձագանքման ապահովման, (դ) բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության դիտարկման, վերլուծության ու գնահատման և (ե) բնակչության առողջության վրա բնապահպանական գործոնների սոցիալ-հիգիենիկ մշտադիտարկում իրականացնելու համար:

Այլ հաստատությունները, որոնք որոշակի դերակատարում ունեն «Ջուր և առողջություն» արձանագրության տարբեր ոլորտներում, ամփոփ նկարագրված են ստորև բերված աղյուսակում:

*Աղյուսակ 3 - Այլ հաստատություններ, որոնք իրականացնում են գործառույթներ «Ջուր և առողջություն» արձանագրության տարբեր ոլորտներում*

| Նախարարություն/ գերատեսչություն | Գործառույթների համառոտ նկարագիր |
|---|---|
| Ջրի ազգային խորհուրդ | Վարչապետի գլխավորությամբ միջգերատեսչական բարձրագույն խորհրդատվական մարմին է, որը քննարկում և առաջարկություններ է ներկայացնում ջրի ազգային քաղաքականության, ջրի ազգային ծրագրի և բնագավառին վերաբերող այլ իրավական ակտերի վերաբերյալ:<br>Վեճերը լուծող հանձնաժողովը ստեղծվել է Ջրի ազգային խորհրդին կից: Օգտագործելով միջնորդությունը, այն կարող է լուծել ջրային հարաբերություններում ծագած վեճերը, որոնք առնչվում են ջրօգտագործման թույլտվություններին: |
| Անդրսահմանային հանձնաժողով | Հանձնաժողովի հիմնական գործառույթները ներառում են հետևյալը՝ (ա) միջպետական համաձայնագրերի նախագծերի մշակում և ներկայացում կառավարությանը, (բ) ծանուցում ՀՀ համապատասխան մարմիններին՝ միջպետական համաձայնագրերով չկարգավորված և պատշաճ լուծում պահանջող խնդիրների |

| Նախարարություն/ գերատեսչություն | Գործառույթների համառոտ նկարագիր |
|---|---|
| | մասին, (գ) Հայաստանի գործակալություններին տեղեկատվության տրամադրում՝ անդրսահմանային ջրերի վիճակի և անդրսահմանային ազդեցությունների մասին: |
| Բնապահպանության նախարարություն (այլ բաժիններ) | Նախարարության ջրային ռեսուրսների քաղաքականության բաժինը պատասխանատու է ջրային ռեսուրսների պահպանման վերաբերյալ պետական քաղաքականության ձևավորման, քաղաքականության ծրագրերի և ռազմավարական ուղղությունների մշակման և դրանց իրականացման ուղղությամբ մոնիթորինգի համար: Բաժնի կոնկրետ գործառույթներից է ազգային ջրային քաղաքականության մշակումը և դրա իրականացման մոնիթորինգը: |
| | Նախարարության շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիթորինգի կենտրոնն իրականացնում է Հայաստանում մակերևութային ջրերի որակի մոնիթորինգ: |
| | Նախարարության հիդրոերկրաբանական մոնիթորինգի կենտրոնը գնահատում է Հայաստանի տարածքում քաղցրահամ ջրերի ձևավորման հիմնական միտումները, դրանց քանակական և որակական հատկանիշները, ինչպես նաև տարածաշրջանային փոփոխությունները: |
| | Նախարարության հանրապետական բնապահպանական պետական տեսչությունը վերահսկում է ջրօգտագործողների կողմից ջրային ռեսուրսների օգտագործման և պահպանության նորմերի և պահանջների պահպանումը: |
| Գյուղատնտեսության նախարարություն | Պետական լիազորված մարմին է, որը սահմանում է գյուղատնտեսական քաղաքականությունը և ռազմավարությունները, ներառյալ՝ ոռոգման և դրենաժային քաղաքականությունները: Նախարարությունը նաև մշակում է ոռոգման ստանդարտները և գյուղատնտեսական մշակաբույսերի ռեժիմները: |
| Էներգետիկայի և բնական ռեսուրսների նախարարություն | Մշակում և իրականացնում է էներգետիկայի, ներառյալ՝ հիդրոէներգետիկ ոլորտի քաղաքականությունն ու ռազմավարությունը: |
| Ֆինանսների նախարարություն | Կազմակերպում և իրականացնում է կառավարական գործակալությունների, պետական ոչ առևտրային կազմակերպությունների և պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների ֆինանսատնտեսական աուդիտ: Այն հսկողություն է իրականացնում նաև ջրային տնտեսության և բնապահպանական ոլորտներում, համակարգում է միջազգային դոնոր կազմակերպություններից ստացված վարկերն ու դրամաշնորհները և վերահսկում է վարկային ռեսուրսներով ֆինանսավորվող ծրագրերի իրականացումը: |
| Արտակարգ իրավիճակների նախարարություն | Հայաստանի փրկարար ծառայության միջոցով պատասխանատու է արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության համար, ներառյալ ջրին առնչվող աղետները՝ հեղեղումները, սելավները, վարարումները և այլն: Այն իրականացնում է արտակարգ իրավիճակների հնարավոր հետևանքների կանխարգելում, կրճատում և վերացում, իրականացնում է քաղաքաշտպանություն, բնակչության և տնտեսական օբյեկտների պահպանում արտակարգ իրավիճակների դեպքում: |
| | Հայաստանի հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի պետական ծառայության միջոցով, երկրում հիդրոօդերևութաբանական ծառայությունների մատուցման շրջանակում իրականացնում է մակերևութային ջրերի քանակի մոնիթորինգ: |
| Ջրօգտագործողների ընկերություններ | Ներկայումս գոյություն ունեցող 42 ՋՕԸ-ներ պատասխանատու են ոռոգման համակարգերի շահագործման համար: |

Ստորև բերված դիագրամն ամփոփում է Հայաստանի Հանրապետության կառավարության նախարարությունների և գերատեսչությունների կազմակերպչական կառուցվածքի գծապատկերը, որոնք պատասխանատու են ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի կառավարման, օգտագործման, պահպանման և մոնիթորինգի տարբեր ասպեկտների համար:




*Նկար 2 - Հայաստանում ջրային ռեսուրսների կառավարման ինստիտուցիոնալ շրջանակը*

Այսպիսով, ինչպես երևում է վերոհիշյալ վերլուծությունից, «Ջուր և առողջություն» արձանագրության վավերացումը չի պահանջում որևէ էական փոփոխություն Հայաստանի ինստիտուցիոնալ դաշտում:

## 4. Վավերացման գործընթացի վերանայում

1999թ.-ին արձանագրության ստորագրումից հետո, Հայաստանը երկու անգամ նախաձեռնել է արձանագրության վավերացման գործընթաց: Առաջին փորձը կատարվել է 2005թ.-ին՝ բնապահպանության նախարարության նախաձեռնությամբ, սակայն, թերևս, նախարարությունում կատարված փոփոխություններով պայմանավորված, գործընթացը շարունակություն չի ստացել:

Վավերացման գործընթացը սկսելու երկրորդ նախաձեռնությունը Հայաստանում տեղի է ունեցել 2011թ.-ին՝ ՀՀ բնապահպանության և առողջապահության նախարարությունների կողմից, որոնք համատեղ պատրաստել էին արձանագրության վավերացման մասին հղումներ պարունակող տեղեկանք: Ստորև բերված տեքստում ներկայացված է ՀՀ բնապահպանության և առողջապահության նախարարությունների համատեղ պատրաստած տեղեկանքի տեքստը:

**ՆԵՐԴԻՐ 1 - ՏԵՂԵԿԱՆՔ**

**1992 թվականի «Անդրսահմանային ջրահոսքերի և միջազգային լճերի պահպանման և օգտագործման մասին» Կոնվենցիային կից «Ջուր և առողջություն» արձանագրությունը վավերացնելու մասին**

*Պատրաստվել է 2011թ.-ին ՀՀ բնապահպանության նախարարության և ՀՀ առողջապահության նախարարության կողմից համատեղ, և ներկայացվել է ՀՀ արտաքին գործերի նախարարություն*

«Անդրսահմանային ջրահոսքերի և միջազգային լճերի պահպանման և օգտագործման մասին» Կոնվենցիային կից «Ջուր և առողջություն» արձանագրությունը լիովին ինքնուրույն փաստաթուղթ է և դրան անդամակցելը կապված չէ Կոնվենցիային անդամակցելու հետ:

Արձանագրությունը նպատակաուղղված է ջրային ռեսուրսների կառավարման բարելավմամբ՝ մարդու անհատական և հանրային առողջության ու բարեկեցության ապահովմանը և ջրի հետ կապված հիվանդությունների կանխարգելմանը, վերահսկմանը ու նվազեցմանը: Այն առնչվում է բոլոր տիպի ջրային ռեսուրսներին և սահմանում է հետևյալ սկզբունքները.

- «Աղտոտողը վճարում է», ըստ որի աղտոտման կանխարգելման, սահմանափակման և նվազեցման համար անհրաժեշտ բոլոր ծախսերը պետք է հոգա աղտոտողը,
- ջրային ռեսուրսների կառավարումը պետք է իրականացվի այնպես, որ ներկա սերունդի կենսական կարիքները բավարարվեն առանց ապագա սերունդների կարիքները ապահովելու հնարավորությունը վտանգի ենթարկելու,
- ջրային ռեսուրսների կառավարման գործողությունների իրագործումը պետք է համակարգվի վարչական ամենաստորին՝ ջրավազանային տարածքային կառավարման մակարդակով,
- ջրի հետ կապված հիվանդությունների բռնկումները և դեպքերը կանխարգելելու և խմելու ջրի աղբյուր հանդիսացող ջրային ռեսուրսները պահպանելու կանխարգելիչ միջոցների ձեռնարկումը,
- ջուրն ունի սոցիալական, տնտեսական և բնապահպանական արժեք, ըստ այդմ ջրային ռեսուրսների կառավարումը պետք է իրականացվի այդ արժեքների առավելագույնս կայուն համակցմամբ,
- ջրային ռեսուրսների կառավարման ու պահպանման, ինչպես նաև առողջապահական խնդիրների վերաբերյալ որոշումներ ընդունելու գործընթացում հասարակության մասնակցության, իրազեկության մատչելիության կարևորության ճանաչումը,
- բավարար քանակի և համապատասխան որակի ջրերի հավասարաչափ մատչելիության ապահովում:

Այն նաև նպատակաուղղված է ջրային ռեսուրսների համապարփակ կառավարմանը, լիարժեք ու արդյունավետ պահպանությանը և ԵՄ ջրի շրջանակային դերեկտիվի պահանջներին համապատասխան ջրային ռեսուրսների կառավարման արդյունավետ մեխանիզմների ներդրմանը՝ ազգային մակարդակով, այդ թվում՝ հանրապետության ջրավազանների և առանձին գետերի էկոլոգիական թողքերի հաշվարկման մեթոդիկաների մշակմանը, ինչպես նաև նպաստելու յուրաքանչյուր ջրային ռեսուրսի համար ջրի անվերադարձ վերցման սահմանային թույլատրելի ծավալների մեծությունների որոշմանը, ջրավազանային կառավարման պլանների մշակմանը և ջրային ռեսուրսների առաջարկի ուրվագծմանը:

Միևնույն ժամանակ արձանագրությունն ընդլայնում է միջազգային համագործակցության զարգացման հնարավորությունները, նշելով, որ կողմերը համագործակցում և անհրաժեշտության դեպքում օգնում են իրար, ինչպես Արձանագրության նպատակներին աջակցող միջազգային գործողությունները, այնպես էլ ազգային և տեղական ծրագրերը իրականացնելու՝ համապատասխան խնդրանքի առկայության դեպքում:

«Ջուր և առողջություն» արձանագրությունն առաջարկում է ջրի հետ կապված հիվանդությունների կանխարգելման, սահմանափակման և նվազեցման նպատակով ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի կառավարման, օգտագործման և պահպանության շրջանակներում իրականացնել համապատասխան միջոցառումներ: Միջոցառումները պետք է ուղղված լինեն խմելու ջրի մատչելիությաւն բարելավմանը, մարդու առողջության համար պահանջվող ջրի որակի ապահովմանը և ջրաէկոհամակարգերի պահպանությանը:

Այսօրվա դրությամբ Հայաստանում կան զգալի խնդիրներ, կապված հոսքաջրերի և դրանց մաքրման հետ:

Հանրապետության բոլոր քաղաքների կենցաղային և արտադրական կեղտաջրերը (միջինում՝ 1.8-2.0 մլդ մ$^3$/տարի) հավաքվում են (հեռացվում են) կոյուղու կոլեկտորների և ցանցերի միջոցով: Գոյություն ունեցող ջրահեռացման համակարգերով իրականացվում է քաղաքների տարածքի մոտ 70-80% կեղտաջրերի հավաքումը (հեռացումը), իսկ գյուղական բնակավայրերը ջրահեռացման համակարգեր, հիմնականում, չունեն:

Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերի կենցաղային և արտադրական կեղտաջրերը, հիմնականում, հեռացվում են մակերևութային ջրային ռեսուրսներ:

Դեռևս 30-40 տարի առաջ հանրապետության բնակավայրերում կառուցվել են շուրջ 20 կեղտաջրերի մաքրման կայաններ (ԿՄԿ), որոնք ներդրումների և շահագործման համար պահանջվող միջոցների բացակայության պատճառով շարքից դուրս են եկել և գտնվում են քայքայված վիճակում: Մասնակիորեն գործում է միայն Երևանի «Աէրացիա» մաքրման կայանը, որտեղ կատարվում է կեղտաջրերի ոչ լրիվ մեխանիկական մաքրում:

Կոյուղաջրերի հեռացման և մաքրման տեսակետից խոցելի տարածքներ են համարվում Երևան քաղաքը և այլ խոշոր քաղաքները, Սևանա լճի ավազանը, առողջապահական և զբաաշրջության գոտիները:

Այս առումով նույնպես արձանագրությունը իրատեսական է, այն պահանջում է մասնակից երկրներից մշակել տվյալ երկրում ջրի և առողջության բնագավառում առկա հիմնախնդիրների լուծման միջոցառումների ծրագիր՝ ժամանակացույցով, դրանց կատարման նպատակային ցուցանիշները և հաստատագրված ժամկետներում (2 և 6 տարին մեկ) անդրադառնալ դրանց կատարմանը՝ անհրաժեշտության դեպքում դրանք վերանայելով: Կատարման հսկողությունը իրականացնում է միայն ինքը՝ մասնակից երկիրը, այդ մասին տեղեկացնելով կողմերի խորհրդակցությանը և Արձանագրության քարտողարությանը:

Այսպիսով «Ջրի և առողջության արձանագրության» հիմնական նպատակները և խնդիրները համահունչ են ՀՀ ջրային օրենսգրքի, «ՀՀ բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի, Շրջակա միջավայրի հիգիենայի բնագավառում գործողությունների ծրագրի, ինչպես նաև Եվրամիության ջրի շրջանակային դերեկտիվի պահանջներին և դրան անդամակցելը կնպաստի երկրում առկա հիմնախնդիրների լուծման առաջընթացին:

Վերոհիշյալ տեղականքն արձանագրության հայերեն թարգմանության հետ միասին ներկայացվել է ՀՀ արտաքին գործերի նախարարություն՝ գերատեսչությունների շրջանում հետագայում տարածելու և նրանց պաշտոնական կարծիքներն իմանալու նպատակով: Սակայն, արտաքին գործերի նախարարությունն ունի որոշ վերապահումներ արձանագրության վավերացման գործընթացի վերաբերյալ՝ նկատի ունենալով «աղտոտողը վճարում է» սկզբունքը և արձանագրության 13-րդ հոդվածի 2-րդ կետում կոնվենցիային արված հղումը: Այս խնդիրը հաղթահարելու համար առաջարկվում է վերանայել արձանագրության վավերացման վերը նշված տեղեկանքը և հստակ փաստել, որ. ա) արձանագրության «աղտոտողը վճարում է» սկզբունքը կիրառվում է միայն երկրի ներսում և չի կարող ծառայել որպես հիմք՝ անդրսահմանային ազդեցությունների դեպքում հոսանքն ի վար գտնվող երկրների կողմից փոխհատուցում պահանջելու համար, բ) կոնվենցիայի 13-րդ հոդվածում արված հղումը կիրառվում է միայն այն երկրների համար, որոնք միևնույն ժամանակ ՄԱԿ-ի ԵՏՀ Ջրային կոնվենցիայի կողմ են:

Մեկ այլ կարևոր խնդիր է այն, որ հայտարարությունն այն մասին, որ պետությունները պատասխանատվություն պետք է կրեն երաշխավորելու համար, որ իրենց իրավասության կամ հսկողության շրջանակում իրականացվող գործունեությունը վնաս չպատճառի ազգային իրավասության շրջանակներից դուրս գտնվող այլ պետությունների կամ տարածքների շրջակա միջավայրին, ենթադրում է խորհրդակցություններ հարևան պետությունների միջև՝ հոսանքն ի վեր գտնվող երկրների կողմից հոսանքն ի վար գտնվող երկրներին հասցված վնասի համար փոխհատուցման փոխարեն: Այս հայեցակետը պետք է հստակ նշված լինի վերանայված տեղեկանքում:

## 5. ՄԱԿ-ի ԵՏՀ համաձայնագրերի վերջին վավերացումները

Վերջին տարիներին Հայաստանը վավերացրել է ՄԱԿ ԵՏՀ-ի 2 համաձայնագիր՝ (ա) 1979թ. կոնվենցիային կից «Եվրոպայում մեծ հեռավորությունների վրա օդի աղտոտիչների տարածման դիտարկման և գնահատման համատեղ ծրագրի երկարաժամկետ ֆինանսավորման մասին» արձանագրությունը և (բ) Էսպոյի «Անդրսահմանային ենթատեքստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին» կոնվենցիային կից «Շրջակա միջավայրի ռազմավարական գնահատում» արձանագրությունը:

Մեծ հեռավորությունների վրա օդի աղտոտիչների տարածման մասին 1979թ.-ի կոնվենցիան ուժի մեջ է մտել 1983թ. մարտի 16-ին: Հայաստանը կոնվենցիան վավերացրել է 1996թ.-ին, որն ուժի մեջ է մտել 1997թ. փետրվարի 21-ին: Կոնվենցիայի «Եվրոպայում մեծ հեռավորությունների վրա օդի աղտոտիչների տարածման դիտարկման և գնահատման համատեղ ծրագրի երկարաժամկետ ֆինանսավորման մասին» արձանագրությունն ուժի մեջ է 1988թ.-ից: Հայաստանն այն ստորագրել է 2008թ.-ին, այդ ժամանակվանից էլ սկսվել է վավերացման գործընթացը: Բնապահպանության նախարարությունը տեղականքն արձանագրության թարգմանության հետ միասին ուղարկել է ՀՀ արտաքին գործերի նախարարություն՝ բոլոր շահագրգիռ նախարարությունների շրջանում տարածելու և վերջիններիս պաշտոնական կարծիքները ստանալու համար: Այն բանից հետո, երբ բոլոր նախարարություններից ստացվեցին դրական կարծիքներ, արձանագրությունն ուղարկվեց ՀՀ Սահմանադրական դատարան և, երբ որոշում կայացվեց, որ արձանագրությունը չի հակասում Հայաստանի Սահմանադրությանը, այն ուղարկվեց Ազ-

գային ժողով՝ վավերացման համար: Այսպիսով, Հայաստանն արձանագրությունը պաշտոնապես վավերացրեց 2013 թ. հոկտեմբերի 20-ին:

Էսպոյի «Անդրսահմանային ենթատեքստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին» կոնվենցիան սահմանում է կողմերի պարտավորությունները՝ գնահատել շրջակա միջավայրի վրա որոշակի գործունեության ազդեցությունը պլանավորման վաղ փուլում: Կոնվենցիան ընդունվել է 1991թ.-ին և ուժի մեջ է մտել 1997թ. սեպտեմբերի 10-ին: Հայաստանը վավերացրել է կոնվենցիան 1996թ. մայիսի 14-ին և այն ուժի մեջ է մտել Հայաստանում 1997թ. սեպտեմբերի 10-ին: «Շրջակա միջավայրի ռազմավարական գնահատում» արձանագրությունն ընդունվել է Կիևում 2003թ.-ին, և ուժի մեջ է մտել 2013թ. հուլիսի 11-ին: Հայաստանը դարձավ արձանագրության 21-րդ կողմ երկիր 2011թ. հունվարի 24-ին՝ անցնելով այն նույն վավերացման գործընթացը, ինչը նկարագրված է վերը:

## 6. Վավերացման համար պահանջվող քայլերը

Վավերացման գործընթացը կրկին նախաձեռնելու համար, որպես առաջին քայլ, բնապահպանության նախարարությանն առաջարկում է վերանայել արձանագրության մասին պատրաստված տեղեկանքը՝ հաշվի առնելով սույն զեկույցի 4-րդ բաժնում նշված մոտեցումները: Բացի այդ, առաջարկվում է տեղեկատվությունում ընդգրկել սույն զեկույցի շրջանակում անցկացրած որոշ վերլուծություններ, մասնավորապես, Հայաստանի համար արձանագրությանն անդամակցելու առավելություններին վերաբերող բաժինը:

Ստորև ներկայացվում են Հայաստանում «Ջուր և առողջություն» արձանագրության վավերացման համար անհրաժեշտ հաջորդական քայլերը:

1. Բնապահպանության նախարարությունը պատրաստում է տեղեկանք արձանագրության մասին՝ հաշվի առնելով սույն ճանապարհային քարտեզի շրջանակում իրականացված վերլուծությունը, մասնավորապես, Հայաստանի համար արձանագրությանն անդամակցելու առավելություններին վերաբերող բաժինը:
2. Կազմակերպվում է հանդիպում բնապահպանության և արտաքին գործերի նախարարությունների ներկայացուցիչների հետ՝ արձանագրության վավերացման հետևանքները մանրամասն քննարկելու համար:
3. Արտաքին գործերի նախարարությունը տեղեկատվությունն արձանագրության հայերեն թարգմանության հետ միասին ուղարկում է բոլոր շահագրգիռ նախարարություններին՝ վերջիններիս կարծիքը ստանալու նպատակով:
4. Կազմակերպվում է հանդիպում բնապահպանության և արտաքին գործերի նախարարությունների ներկայացուցիչների հետ՝ շահագրգիռ նախարարություններից ստացված դիտողությունները քննարկելու համար:
5. Արտաքին գործերի նախարարությունն ամփոփում է մեկնաբանությունները/դիտողությունները և փաստաթուղթն ուղարկում է ՀՀ կառավարություն՝ նիստում ընդունելու համար:
6. ՀՀ կառավարության նիստում վավերացման մասին համապատասխան որոշում ընդունելուց հետո, փաստաթուղթն ուղարկվում է ՀՀ Սահմանադրական դատարան:
7. Սահմանադրական դատարանի կողմից դրական կարծիք ստանալուց հետո (այն, որ արձանագրությունը չի հակասում Հայաստանի Հանրապետության Սահմանադրու-

թյանը), բնապահպանության նախարարությունն առաջարկում է իր թեկնածուին՝ հարցը Ազգային ժողովի գյուղատնտեսական և բնապահպանական հարցերի մշտական հանձնաժողովում ներկայացնելու համար:

8. Արձանագրությունը քննարկվում է Ազգային ժողովի գյուղատնտեսական և բնապահպանական հարցերի մշտական հանձնաժողովում, որից հետո ներկայացվում է Ազգային ժողով՝ վերջնական վավերացման համար:

## 7. Եզրակացություն

- Հայաստանը մեծապես կշահի «Ջուր և առողջություն» արձանագրության վավերացումից: Արձանագրության սկզբունքների և մոտեցումների իրականացումը, որոնք լիովին համահունչ են Հայաստանի օրենսդրությանը, կմեծացնի ազգային կարողությունները երկրի ջրային ռեսուրսների կառավարման գործում, ներառյալ՝ ջրային էկոհամակարգերի պահպանությունը և ջրի հետ կապված հիվանդությունների կանխարգելումը, վերահսկումը և նվազեցումը: Բացի այդ, արձանագրության վավերացումը կօգնի Հայաստանին իրականացնել բազմաթիվ դրույթներ, որոնք արդեն իսկ պահանջվում են երկրի ջրային օրենսդրությամբ, և որտեղ երբեմն առաջընթաց չի արձանագրվում:

- Հայաստանում անհրաժեշտ իրավական և ինստիտուցիոնալ դաշտերն արդեն առկա են, հետևաբար, արձանագրության իրականացման համար էական փոփոխություններ չեն պահանջվի: Ավելին, ՀՀ ջրային օրենսգիրքը, «Ջրի ազգային քաղաքականության» մասին օրենքը և ջրի ազգային ծրագիրը պարունակում են այն հիմնարար սկզբունքները, մոտեցումները և դրույթները, որոնք ունեն շատ ընդհանրություններ արձանագրության համապատասխան դրույթների և մոտեցումների հետ: Միակ օրենքը, որը պետք է մշակել, «Խմելու ջրի մասին» օրենքն է, որը նաև Հայաստանի ջրային օրենսգրքի պահանջներից մեկն է:

- Չնայած արձանագրության կողմ չլինելու հանգամանքին, Հայաստանն արդեն ակտիվորեն աշխատում է արձանագրության կողմերի և քարտուղարության հետ և մասնակցում է արձանագրության շրջանակում իրականացվող գործողություններին: Արձանագրության կողմերի հետ միասին, 2010 և 2013 թվականներին Հայաստանը ներկայացրել է երկու ամփոփ հաշվետվություն՝ արձանագրության իրականացման մասին: Ավելին, ՄԱԿ ԵՏՀ-FinWaterWei *««Ջուր և առողջություն» արձանագրություն: Հայաստանում առողջության բարելավում՝ նպատակային ցուցանիշների սահմանման միջոցով՝ ջրի կայուն կառավարում, անվտանգ խմելու ջրի մատչելիություն և պատշաճ ջրահեռացում ապահովելու նպատակով»* ծրագրի շրջանակում, համաձայն արձանագրության, կատարվել է ելակետային իրավիճակի վերլուծություն և սահմանվել են նպատակները, որոնք ներկայումս, պաշտոնական հաստատման նպատակով, գտնվում են գերատեսչությունների կողմից վերանայման գործընթացում:

- Հայաստանը երկու անգամ (2005թ.-ին և 2011թ.-ին) ջանքեր է գործադրել՝ արձանագրության վավերացման համար, սակայն դեռ չի հաջողել՝ որոշ մտահոգությունների պատճառով, որոնք կապված են «աղտոտողը վճարում է» սկզբունքի և արձանագրության 13-րդ հոդվածում կոնվենցիային արված հղման հետ: Այդպիսով, առա-

ջարկվում է կրկին նախաձեռնել վավերացման գործընթացը՝ վերանայելով արձանագրության վավերացման մասին տեղեկանքը: Վերանայված տեղեկանքը պետք է ներառի սույն տեխնիկական զեկույցի եզրակացությունները, այդ թվում՝ երկրի համար արձանագրության վավերացման առավելությունները, ինչպես նաև հստակ մատնանշի, որ. **ա) արձանագրության «աղտոտողը վճարում է» սկզբունքը կիրառվում է միայն երկրի ներսում, և չի կարող ծառայել որպես հիմք՝ անդրսահմանային ազդեցությունների դեպքում՝ հոսանքն ի վար երկրների կողմից փոխհատուցում պահանջելու համար**, **բ) կոնվենցիային արված հղումը, որը նշված է կոնվենցիայի 13-րդ հոդվածում, վերաբերում է միայն այն երկրներին, որոնք միևնույն ժամանակ հանդիսանում են ՄԱԿ-ի ԵՏՀ Ջրային կոնվենցիայի կողմ**: Բացի այդ, արձանագրության թարմացված տեղեկատվությունը պետք է հստակ ցույց տա, որ այն հայտարարությունը, համաձայն որի՝ պետությունները պետք է երաշխավորեն, որ իրենց իրավասության կամ հսկողության շրջանակում իրականացվող գործունեությունը վնաս չի պատճառի ազգային իրավասության շրջանակներից դուրս գտնվող այլ պետությունների կամ տարածքների շրջակա միջավայրին, ենթադրում է խորհրդակցություններ հարևան պետությունների միջև՝ հոսանքն ի վեր գտնվող երկրների կողմից հոսանքն ի վար գտնվող երկրներին հասցված վնասի համար փոխհատուցման վճարումներ կատարելու փոխարեն:

- Վերջերս Հայաստանի կողմից վավերացված 1979թ.-ի կոնվենցիային կից «Եվրոպայում մեծ հեռավորությունների վրա օդի աղտոտիչների տարածման դիտարկման և գնահատման համատեղ ծրագրի երկարաժամկետ ֆինանսավորման մասին» արձանագրությունը, ինչպես նաև՝ Էսպոյի «Անդրսահմանային ենթատեքստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին» կոնվենցիային կից «Շրջակա միջավայրի ռազմավարական գնահատում» արձանագրությունը վկայում են, որ ՄԱԿ-ի ԵՏՀ «Ջուր և առողջություն» արձանագրության վավերացման գործընթացը կարող է ավարտվել համեմատաբար կարճ ժամանակահատվածում՝ հաշվի առնելով վերջին տարիներին արձանագրության խնդիրների և քննարկումների մանրամասների վերաբերյալ գիտելիքների և իրազեկվածության մակարդակը:

## Գրականություն


- «Ելակետային իրավիճակի վերլուծություն և փորձագիտական գնահատում: Առաջին աշխատանքային նախագիծ», պատրաստված ՄԱԿ-ի ԵՏՀ- FinWaterWei ««Ջուր և առողջություն» արձանագրություն: Հայաստանում առողջության բարելավում՝ նպատակային ցուցանիշների սահմանման միջոցով՝ ջրի կայուն կառավարում, անվտանգ խմելու ջրի մատչելիություն և պատշաճ ջրահեռացում ապահովելու նպատակով»» ծրագրի շրջանակում, 2014թ.:

- ««Նպատակների նախագիծն՝ ըստ Հայաստանում «Ջուր և առողջություն» արձանագրության», պատրաստված ՄԱԿ-ի ԵՏՀ- FinWaterWei ««Ջուր և առողջություն» արձանագրություն: Հայաստանում առողջության բարելավում՝ նպատակային ցուցանիշների սահմանման միջոցով՝ ջրի կայուն կառավարում, անվտանգ խմելու ջրի մատչելիություն և պատշաճ ջրահեռացում ապահովելու նպատակով»» ծրագրի շրջանակում, 2014թ.:

- ՀՀ բնապահպանության նախարարություն, «Հայաստանի Հանրապետության մասնակցությունը միջազգային բնապահպանական համաձայնագրերին», 2014թ. (առկա է http://www.mnp.am/?p=201 կայքում):

- ՀՀ բնապահպանության նախարարություն, ««Երկրորդ ամփոփ հաշվետվությունը՝ համաձայն «Ջուր և առողջություն» արձանագրության», 2013թ.:

- SHER Ingénieurs-Conseils sa, “Feasibility of the Master Plan for Integrated Water Resources Management in the Six Water Basin Management Areas of Armenia”, 2013.

- Tonoyan V., “Policy Brief: Summary of Results and Lessons Learned from the Implementation of the Armenian NPD on IWRM”, 2010.

- United Nations Economic Commission for Europe/World health Organization’s Regional Office for Europe, “Protocol on Water and Health to the 1992 Convention on the Protection and Use of Transboundary Watercourses and International Lakes”, 1999.